25.08.2022. N 135-Լ

Ինկորպորացիա առ 23.07.2025թ. N 178-Լ

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՆՁԸ ՀԱՅՏՆԻ ՉԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՔԵՐՈՎ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԿԱՍԵՑՎԱԾ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանրային քրեական հետապնդման ենթակա անձը հայտնի չլինելու դեպքերով, ինչպես նաև քրեական հետապնդման ժամկետները կասեցված քրեական վարույթների հաշվառման գործընթացը կազմակերպելու, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց անհատական ծանրաբեռնվածությունը, կատարված աշխատանքների արդյունավետությունը պարզելու նպատակով և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով.

Հանձնարարում եմ.

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) մինչդատական վարույթ իրականացնող ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (այսուհետ՝ քննիչ)՝

1) կատարել անհրաժեշտ վարութային և ապացուցողական գործողությունները հանրային քրեական հետապնդման ենթակա անձը հայտնի չլինելու դեպքերով նախաձեռնված քրեական վարույթներով.

2) կազմել տեղեկանքներ հանրային քրեական հետապնդման ենթակա անձը հայտնի չլինելու դեպքերով նախաձեռնված քրեական վարույթների արդյունքներով՝

ա. ոչ մեծ ծանրության ու միջին ծանրության հանցագործությունների դեպքերով քրեական վարույթներով՝ քրեական վարույթ նախաձեռնելու պահից երկամսյա ժամկետում,

բ. ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների դեպքերով քրեական վարույթներով՝ քրեական վարույթ նախաձեռնելու պահից չորս ամսյա ժամկետում.

3) սույն կետի 2-րդ ենթակետում նշված տեղեկանքները (այսուհետ՝ տեղեկանք) քրեական վարույթի նյութերի հետ ներկայացնել անմիջական վերադասի (ստորաբաժանման պետի կամ նրա տեղակալի՝ ըստ համակարգման ոլորտի) հաստատմանը. (խմբ. 12.12.2024. N 238-Լ)

4) տեղեկանքում թույլ տրված թերությունների առկայության դեպքում՝ անհրաժեշտ վարութային և ապացուցողական գործողություններ կատարելու ուղղությամբ կատարել անմիջական վերադասի հանձնարարությունները և կազմել նոր տեղեկանք.

4.1) տեղեկանքն անմիջական վերադասի հաստատելուց հետո ներկայացնել ստորաբաժանման պետի վերահաստատմանը (եթե անմիջական վերադասը հանդիսանում է տվյալ ստորաբաժանման պետի տեղակալը). (ենթ. լրաց. 12.12.2024. N 238-Լ)

4.2) ստորաբաժանման պետի կողմից տեղեկանքը վերահաստատելուց (կամ հաստատելուց) հետո՝ անհրաժեշտ ապացուցողական և վարութային գործողությունները կատարված և հանրային քրեական հետապնդման ենթակա անձը հայտնի չլինելու դեպքերով քրեական վարույթները (տեղեկանքներով) հաշվառել համապատասխան ստորաբաժանումում՝ որպես հանրային քրեական հետապնդման ենթակա անձը չհայտնաբերված քրեական վարույթներ և ստուգման նպատակով ներկայացնել հսկող դատախազին. (ենթ. լրաց. 12.12.2024. N 238-Լ, խմբ. 26.12.2024. N 258-Լ)

5) սույն կետի 4.2-րդ ենթակետի համաձայն հաշվառված քրեական վարույթը հսկող դատախազի կողմից հանձնարարությամբ վերադարձվելու դեպքում՝ հանել հաշվառումից և համարել որպես ընթացիկ վարույթ, բացառությամբ 5.1-ին կետով նախատեսված դեպքերի. (լրաց. 12.12.2024. N 238-Լ, խմբ. 26.12.2024. N 258-Լ, լրաց. 23.07.2025թ. N 178-Լ)

5.1) սույն հանձնարարականի 5-րդ կետով նախատեսված կարգով՝ դատախազի կողմից հանձնարարությամբ քրեական վարույթը վերադարձվելու դեպքում, երբ ստորաբաժանման պետի կողմից Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով կամ քննիչի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով սահմանված կարգով առարկություն է ներկայացվել հանձնարարության վերաբերյալ, բացառիկ դեպքերում (հանձնարարությունն ակնհայտորեն դուրս է քննության առարկայի սահմաններից և հանգեցնում է քննիչի արհեստական ծանրաբեռնվածությանը, հանձնարարության մեջ նշված պարզաբանման ենթակա հանգամանքները արդեն իսկ ամրագրված են նորմատիվ իրավական ակտերով) քննիչի կողմից կազմվում է նոր տեղեկանք, որը հաստատում է ստորաբաժանման ղեկավարը և ներկայացվում վերահաստատման՝

ա. Մարզային քննչական վարչությունները՝ տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչության պետին.

բ. Երևան քաղաքի քննչական վարչության ստորաբաժանումները՝ Երևան քաղաքի քննչական վարչության պետին.

գ. Զինվորական քննչական գլխավոր վարչության ստորաբաժանումները՝ զինվորական քննչական գլխավոր վարչության պետի՝ կոնկրետ ստորաբաժանումը համակարգող տեղակալին.

դ. Հատկապես կարևոր գործերով քննության գլխավոր վարչության ստորաբաժանումները՝ հատկապես կարևոր գործերով քննության գլխավոր վարչության պետի տեղակալին.

ե. Տնտեսական հանցագործությունների և մաքսանենգությունների քննության գլխավոր վարչության ստորաբաժանումները՝ տնտեսական հանցագործությունների և

մաքսանենգությունների քննության գլխավոր վարչության պետին.

զ. Պետության, սահմանադրական կարգի հիմունքների և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչության ստորաբաժանումները՝ պետության, սահմանադրական կարգի հիմունքների և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչության պետին,

է. Հատուկ հանձնարարություններով գլխավոր վարչության ստորաբաժանումները՝ հատուկ հանձնարարություններով գլխավոր վարչության պետին. (ենթ. լրաց. 23.07.2025թ. N 178-Լ)

6) համապատասխան ստորաբաժանումներում հաշվառել քրեական հետապնդման ժամկետները կասեցված քրեական վարույթները:

2. Կոմիտեի մինչդատական վարույթ իրականացնող ստորաբաժանումների պետերին կամ նրանց տեղակալներին՝ իրենց անմիջական համակարգման ոլորտում գտնվող քննիչների վարույթներով.

1) հետևողականություն ցուցաբերել հանրային քրեական հետապնդման ենթակա անձը հայտնի չլինելու դեպքերով նախաձեռնված քրեական վարույթներով՝ անհրաժեշտ վարութային և ապացուցողական գործողությունների կատարման նկատմամբ.

2) ստուգել սույն հանձնարարականի 1-ին կետով նախատեսված տեղեկանքներն, ուսումնասիրելով քրեական վարույթի նյութերը, կատարված անհրաժեշտ վարութային և ապացուցողական գործողությունները, պարզել թույլ տրված թերությունները.

3) թերություններ հայտնաբերելու դեպքում տեղեկանքը վերադարձնել քննիչին՝ հանձնարարելով ողջամիտ ժամկետում կատարել անհրաժեշտ գործողություններ.

4) թերություններ չհայտնաբերելու դեպքում հաստատել տեղեկանքը, իսկ եթե անմիջական վերադասը հանդիսանում է տվյալ ստորաբաժանման պետի տեղակալը, ապա ներկայացնել այն ստորաբաժանման պետի վերահաստատմանը. (խմբ. 12.12.2024. N 238-Լ)

5) թերությունները շտկելուն ուղղված՝ անմիջական վերադասի հանձնարարությունները չկատարելու դեպքում միջոցներ ձեռնարկել սահմանված կարգով քննիչի նկատմամբ ծառայողական քննություն անցկացնելու համար.

6) ապահովել սույն հանձնարարականով նախատեսված հանրային քրեական հետապնդման ենթակա անձը հայտնի չլինելու դեպքերով և քրեական հետապնդման ժամկետները կասեցված քրեական վարույթների հաշվառման աշխատանքները:

3. Սույն հանձնարարականի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել ստորաբաժանումների պետերին:

4. Սույն հանձնարարականն ուղարկել Կոմիտեի նախագահի տեղակալներին, խորհրդականներին, Կոմիտեի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների պետերին:

(հանձն. շարադրվել է նոր խմբագ. 23.02.2023. N 63-Լ)

Ա. ՔՅԱՐԱՄՅԱՆ